

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒԲԵՐՏ ՍԱՐԻՆՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ.Քոբանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի թեմայի ղեկավար, տ.գ.դ., պրոֆեսոր*

ՀԱՅ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ. ԴՎԿԻԹ ԱՆԱՆՈՒՆ

Հայ հասարակական միտքը մի անգամ չէ, որ անդրադարձել է հայ տնտեսական հետազոծին՝ փորձելով նրա փոխակերպությունները ենթարկել որոշակի գնահատության: Այս իմաստով կարևորվում է Դավիթ Անանունի (1879-1942) «Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում» եռահատոր աշխատությունը, որը հայ մտքի հետաքրքրական ու մնալից արժեքներից է: Ահա հետազոտության նպատակագրումը. «Ներկա աշխատության մեջ մենք ջանացել ենք թափանցել հայ հասարակական կյանքի խորքը, հասկանալ ու լուսաբանել այն բոլոր երևույթները, որոնց պատմական դասավորումով կառուցվել է մեր ինքնօրինակ գոյության պատվանդանը: ...Մեր նպատակն է եղել դիտել մասսայական կյանքը, ըմբռնել հասարակական հաստատությունների իմաստը, հետևել նրանց ծագման, զարգացման ու անկման ընթացքին, խելամուտ լինել ժամանակի տիրող և պայքարող գաղափարականությանը, առհասարակ ուսումնասիրել մեր քաղաքացիական զարգացման գործոնները»¹: Ինչպես տեսնում ենք, Դ.Անանունը հայ հասարակական զարգացումը դիտում է պատմական էվոլյուցիայի ընթացքի մեջ: Հետաքրքրական է ժամանակաշրջանի այն պարբերացումը, որ կատարում է Դ.Անանունը: Նա XIX դ. ռուսահայերի զարգացումը բաժանում է երկու փուլի՝ մինչև 70-ական թթ. և 70-90-ական թթ.: Իհարկե, չի կարելի մինչև 70-ական թթ. դիտել որպես հասարակական զարգացման մի հարթ հատված, առանց տնտեսական ու սոցիալական, գաղափարական ու քաղաքական առաջընթացի: Դա դեռևս ավանդականը պահպանող, բայց և արտադրողական ուժերի ու հասարակական հարաբերությունների կառուցվածքը վերափոխող ու նախապատրաստող ներքին կատակլիզմների ժամանակաշրջան էր: Հենց այս իմաստով էլ Դ.Անանունը շեշտում է, թե «Մինչև 70-ական թվականներն Անդրկովկասի ժողովուրդների և, մասնավորապես, հայ ժողովրդի քաղաքացիական կյանքը դեռ կայուն դրություն չէր ստացել, այն կաղապարման մեջ էր: Այդ ժամանակ է, որ կյանք են առնում մի շարք օրենքներ և հաստատություններ (գյուղացիական օրենք, հայ դպրոցական օրենք, քաղաքային ինքնավարություն և այլն), որոնք իրենց կնիքն են դնում ապագա կյանքի վրա: Ապա այդ օրերին սկսվում է հեղաշրջվել և երկրի դրամագլուխների գործառնության ընթացքը. առևտրական դրամագլուխը տենդենցներ է ցույց տալիս արդյունաբերական դառնալու: Մյուս կողմից, իրերի նոր դասավորումը հանդես է բերում նոր հայ հրապարակագրություն և գրականություն: Հարկավ, այսպիսի երևույթների հանդեպ վերջանում էր կյանքի մի փուլը և սկսվում է մյուսը»²:

Բնականաբար խոսքը վերաբերում է նաև կառավարման կերպի փոփոխություններին, որ կատարվեցին XIX դարի «ռուսահայերի հասարակական զարգացման» ընթացքում: Ինչպես հայտնի է, մինչև Ռուսաստանի հետ միանալը Հայաստանը գերազանցապես բաժանված էր Պարսկաստանի և Թուրքիայի միջև: Կ.Մարքսի այն արտահայտությունը, թե XIX դարասկզբին

¹ Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում (1800-1870), հ.1, Բաքու, 1916, էջ 1:

² Նույն տեղում, էջ III-IV:

Թուրքիան գտնվում էր «Ֆեռդալիզմի ամենաստորին և բարբարոսական ստադիայում», հավասարապես վերաբերում է նաև Պարսկաստանին: Հենց այդ դիտակետից էլ Դ.Անանունը բնութագրում է երկրի կառավարման համակարգը. «XIX դարի առաջին քառորդի Պարսկաստանը մի բռնապետական երկիր էր: Պետականության կապն ու զգացումը չափազանց թույլ էր նրա մեջ: Պետությունը - դա «արքայից արքան էր», ինքնամոլ և անգոր մի խրտվիլակ հարևանների առաջ: Եվ սակայն դրսում անգոր այդ խրտվիլակը կարող էր երկրի ներսում սարսափելի ուժ դառնալ, երբ նա խուժանի հետ ելնում էր պատժելու որևէ ըմբոստ կուսակալի, որը հանդգնում էր երկրի կենտրոնից եկած կարգադրության դեմ գնալ: Ինչպես «արքայից արքան» ողջ երկիրը համարում էր սեփական կալվածք և իրեն ազատ էր զգում կառավարելու իր գիտցածի պես, այնպես էլ նրանից նշանակված կուսակալներն էին կալվածք համարում իրենց հանձնված երկրամասերը, կալվածքը ազատորեն կառավարելու և շահվելու, որովհետև այդ պաշտոնը ձեռք է բերված դրամով և ընծայաբերություններով, որովհետև այդ կարգ ու կանոնի տեսակետից անհաստատ երկրում անհրաժեշտ էր շտապել մի ավելցուկով ետ ստանալ ծախսվածը»¹: Ակներև է, որ Դ.Անանունը շեշտում է կառավարման այդպիսի համակարգի անարդյունավետությունը՝ կառուցված նույն բռնապետական սկզբունքի վրա, ինչպես կենտրոնում, այնպես էլ ծայրամասերում: Կ.Մարքսը, անդրադառնալով ֆրանսիական տնտեսության ամենաստվար խավի՝ գյուղացիության բնութագրությանը, նկատում է, թե գյուղացիական տնտեսությունները, լինելով մասնատված և միմյանցից մեկուսացած, իրենց գոյության միջոցները ձեռք են բերում «ավելի շատ փոխանակում կատարելով, քան թե հասարակության հետ հարաբերությունների մեջ մտնելով», «ֆրանսիական ազգի վիթխարի մասսան» կազմվում է համանուն մեծությունների հասարակ գումարումից» և հեռու է իր շահերը պաշտպանելու պառլամենտական կազմակերպվածության հիմքից²: Ինչ խոսք, Ֆրանսիան և Պարսկաստանը իրենց քաղաքակրթական մակարդակներով գտնվում էին տարբեր աստիճաններում, ինչը չէր ժխտում նաև ինքը՝ Դ.Անանունը, սակայն «արտադրելակերպի» առումով նրա կարծիքով առկա է ընդհանրությունը որպես գյուղացիական երկրների՝ պայմանավորելով կառավարման համակարգի առանձնահատկությունը, ուր գործադիր իշխանությունը հասնում է ճնշող և հասարակական ուժերը փոշիացնող ուժի, որն «իրեն է ենթարկում հասարակությունը»³:

Այս իմաստով Դ.Անանունը անդրադառնում է XIX դարասկզբին Արևելյան Հայաստանի խանությունների վարչական և դատաստանական կառուցվածքի խնդիրներին: Տնտեսության պատմաբանները նշում են ջրի բացառիկ կարևորությունը Անդրկովկասի գյուղատնտեսության համար: Դ.Անանունը նկատում է, որ հենց այդ նկատառումներից էլ խանությունները բաժանվում էին այսպես կոչված մահալների՝ «ռոզման կանոնավորում» իրականացնելու համար: Այսպես՝ Երևանի խանությունը բաժանված էր 13 մահալների, որոնք կրում էին իրենց միջով հոսող գետերի անունները: Ղարաբաղի խանության մեջ հինգ շրջաններ (Դիզակ, Վարանդա, Խաչեն, Ջրաբերդ և Գյուլիստան), շնորհիվ միատարր բնակչության և աշխարհագրական առանձնահատուկ դիրքի, ինքնուրույն մահալներ էին կազմում: Երևանի խանության մեջ մահալի կառավարումը իրականացնում էին խաները և բեկերը, որոնք կրում էին միրբուլուք կոչումը և օժտված էին ավել կամ պակաս իշխանությամբ: Ղարաբաղում կառավարիչները հայ մելիքներն էին: Թեև այդ պաշտոնները ըստ էության ունեին ժառանգական բնույթ, այնուամենայնիվ այն կախված էր խանի բարեհաճությունից: Դ.Անանունը ուրվագծում է բեկերի, մելիքների այն հիմնական պարտավորությունները, որոնք էլ ներկայացնում էին նրանց կառավարման ֆունկցիաները.

- մահալի համար սահմանված տուրքերի բաշխելը գյուղերի վրա,

¹ Նույն տեղում, էջ 18:

² Մարքս Կ. և Էնգելս Ֆ., Ընտիր երկեր, հ.1, Ե., 1972, էջ 652-653:

³ Անանուն Դ., նշվ. աշխ., էջ 21:

- հսկողությունը հարկերը ժամանակին մուծելու,
 - քննել բնակիչների և գյուղերի միջև ծագած վեճերը, պաշտոնյաների դեմ գանգատները,
 - ի կատար ածել դատարանական որոշումները,
 - որոշակի հանցանքների համար պատիժների ենթարկելը և այլն:
- Վարչական սանդղակը վերջանում էր տանուտերերով:

Դ.Անանունը հատուկ ուշադրություն է դարձնում Գարաբաղի մելիքների կառավարման հարցերին՝ նշելով մի շատ կարևոր առանձնահատկություն, այն է՝ անկախ կառավարում իրականացնելու ձգտումը. «Նրանք՝ այդ երկրների (մելիքությունների-Ռ.Ս.) ժառանգական իշխաններ համարելով իրենց՝ միշտ պայքարում էին Գարաբաղի խանի դեմ, չէին կամենում իրենց և պարսկական արքունիքի միջև տեսնել նրա իշխանական կապը: Նրանց մեջ այնքան էր արմատացած իրենց եթե ոչ անկախության, գոնե կիսանկախության զգացումը, որ տասնյակ տարիներ չէին թողնում խաների գերիշխանության տապալման խորհուրդը»¹: Եվ ընդհանրապես, Գարաբաղը «փր տնտեսական ինքնամփոփությունը որոնել է միշտ թե՛ պարսկական և թե՛ ռուսական տիրապետության ժամանակ»:

* * *

Դ.Անանունը պատմաբան-տնտեսագետ էր: Ինչպես նկատում է Մ.Ադունցը, Դ.Անանունի աշխատություններից կարելի է նյութեր քաղել Հայաստանի ժողովրդական տնտեսության պատմության մասին²: Այնուամենայնիվ, նա արժարժում է հանգուցային նշանակության հարցեր, որոնք միշտ շարժել են տեսական մտքի հետաքրքրությունը: Դ.Անանունը անդրադառնում է Հայաստանում տիրող ագրարային հարաբերություններին, նկարագրում համայնական հողատիրության մանրամասները, համփա-չարեքի, հարագաշության տնտեսական բովանդակությունը, ցույց է տալիս, որ խանական կառավարության շրջանում համայնքը, ըստ էության լինելով «փակ տնտեսական ամբողջական միավոր», «կարիք չէր զգում վարչական և դատաստանական բարդ կազմակերպության»: Ամեն ինչ նրանում պարզ էր ու հասկանալի: Սակայն կամի սկզբունքային հարց՝ հողի նկատմամբ սեփականության ձևը, որը պայմանավորում է հողատիրության պայմաններն ու դասերի փոխհարաբերությունները: Դ.Անանունը այն կարծիքին է, որ «հողի մասնավոր տիրապետություն չկար պարսկական խանություններում: ...Հողը համարվում էր «Աստծո պարզև» և պետական, ավելի ճիշտ՝ թագավորի սեփականություն: Այդ կանոնից դուրս էին համարվում տնատեղերը, պարտեզներն ու այգիները: Դրանց մասնավոր սեփականությունը ճանաչված իրողություն էր: Մնացածը՝ վարելահող, խոտհարք, անտառ, արոտատեղի և ջուր, մասնավոր տեր չէին ճանաչում, նրանից օգտվում էին գյուղական համայնքները և թափառական ցեղերը: Շնորհիվ երկրի չափազանց նոսր բնակչության և ազատ հողերի առատության՝ ժողովուրդների տեղափոխությունն ընդհանրացած երևույթ էր: Հողը որևէ շահ տալիս էր այն ժամանակ, երբ նրա վրա հաստատ բնակություն կար: Մեր օրերի կալվածատիրությունը, երբ հնարավոր է լայն տարածություններ ունենալ և այն մշակել վարձու ձեռքերով կամ կապալալիս եղանակով, աներևակայելի բան էր խանություններում: Այդ պատճառով հողն ինքնին արժեք չուներ, եթե նա բնակեցված չէր նստակյաց ժողովուրդով: Այդ ժողովուրդն էլ ...միշտ շարժման մեջ էր: Նա կամ վրանաբնակ խաշնարած էր, որ հենց իր արտադրելակերպի շնորհիվ ոչ մի կայուն և հաստատ բնակություն չէր ստեղծում, կամ թե երկրագործ գյուղացի էր, որ քաղաքական հեղինակույթ և մշտամփոփոխ դրության պատճառով ստիպված էր մի աչքը հառած պահել երկրի անառիկ խորշերի կամ հարևանների ապահով անկյունների վրա: ...Պատերազմը, արշավանքն ու կողոպուտը նույնպես արտադրելակերպեր էին: Ահա ...թե ինչու խանություններում արմատ չէր զգում հողի մասնավոր սեփականությունը»³:

¹ Նույն տեղում, էջ 31:

² Ադունց Մ.Ն., Հայաստանի ժողովրդական տնտեսությունը և հայ տնտեսագիտական միտքը XX դարի սկզբին, Ե., 1968, էջ 390:

³ Անանուն Դ., նշվ. աշխ., էջ 48:

Հողի մասնավոր սեփականության բացակայության վերաբերյալ Դ.Անանունի փաստարկները անհրաժեշտ են այն հետևության համար, որ եթե չկա մասնավոր սեփականության հաստատությունը, հետևապես գոյություն չունի նաև ճորտություն: Նա չի համաձայնում այն հեղինակների կարծիքին, որոնք գտնում էին, թե ճորտության բացակայությունը պարսկական խանություններում պայմանավորված է միայն մեկ փաստարկով, այն է՝ հակասությունը իսլամի սկզբունքներին: Բայց մի՞թե քրիստոնեությունը, որը ենթադրում է կոմունիզմի ինչ-ինչ տարրեր, ճորտություն է քարոզում: «Որ իսլամը պատվար չէր կանգնում մարդը մարդուն ստորադրելու և ենթարկելու գաղափարին, - դրա փառավոր ապացույցը կարող է ծառայել ստրկության ինստիտուտը, որ համատարած երևույթ էր մուսուլմանական երկրներում: Ուրեմն, այդ ինչպես է պատահում, որ ճորտությունը բացասող իսլամը հանդուրժում էր, որ իր շուկաներում վիստան ստրկավաճառները և ցուցադրեն իրենց «ապրանքները»՝ բաղկացած ոչ միայն «անհավատներից», այլև ջերմեռանդ «հավատացյալներից»¹: Հեղինակը հարցի բացատրության համար սկզբունքային նշանակություն է տալիս այն ըմբռնմանը, ըստ որի ճորտության հաստատության բացակայությունը պետք է կապել տնտեսական կյանքի զարգացման ցածր աստիճանի հետ: Կյանքն, ըստ էության, նահապետական էր, անցում էր կատարվում նստակյաց վիճակի, հողային սեփականությունն անկայուն էր, բնակչությունը՝ նոսր, և մարդն ավելի գնահատելի էր, քան հողը: Այսպիսին էր հայ հեղինակի կողմից հարցի բացատրության բանաձևը, որի խսկության հաստատման համար նա վկայակոչումներ է կատարում տարբեր հեղինակներից: Դ.Անանունը նշում է, որ տնտեսական կյանքի զարգացումը ի վերջո հանգեցնում է համայնական հարաբերությունների քայքայմանն ու մասնավոր սեփականության առաջացմանը: Նա անդրադառնում է հողային պայմանների, գյուղացիական զանգվածի դասակարգմանը՝ ըստ հողի նկատմամբ ունեցած հարաբերության, կառավարման այնպիսի լծակների, ինչպիսիք էին մյուլքի և թիուլի նկարագրությունը, գյուղերի տարակարգումը և այլ հարցեր: Մի բան ակներև է, որ ինչքան էլ նրա հայեցողությունը բացարձակ կողմնորոշվածություն է ցուցաբերում ժխտելու մասնավոր սեփականության գոյությունը, այնուամենայնիվ այդ հաստատության առանձին սկզբունքներ նստեցնում է հողային հարաբերություններում: Պատահական չէր նա եզրակացնում, որ «հողը այդ երկրներում մասնավոր կայուն (ընդգծումը մերն է-Ռ.Ս.) սեփականություն չէր համարվում»²: Թվում է՝ Դ.Անանունի «կայուն սեփականություն» հասկացությունը ինչ-ինչ տարբեր է պարունակում թիուլի կամ մյուլքի տնտեսական բովանդակության կամ էլ նույն սկզբունքներն ակնկալող հողատիրության ինչ-ինչ առանձնահատկությունների ընդգծման իմաստով:

Հարկ է նկատել, որ սեփականության հարցը կենտրոնական տեղ է գրավել հասարակական հարաբերությունների վերաբերյալ պատմատնտեսագիտական գրականության մեջ: Հայկական մարզի հայտնի հետազոտող Հ.Շոպենը գրում է, թե նրանում «բնակված կալվածքների տիրապետության իրավունքը բոլորովին տարբերվում է Անդրկովկասի մյուս մասերում գոյություն ունեցող բոլոր դրություններից, այստեղ նրանց օգտագործման տակ գտնված հողը չի կարելի տիրողի սեփականություն համարել, քանի որ հողն ամբողջովին, ամենուրեք և առանց բացառության, շահնաշահին, այսինքն՝ զանձարանին է պատկանել: Իրենց օգտագործման ներքո բնակված հողեր ունեցող անձերն այլ բան չեն եղել, քան հասույթների հասարակ մասնակիցներ, և նրանց ծագումը բոլորովին նմանվում է ֆեոդալական հողատիրության ծագմանը Եվրոպայում»³: Իսկ Վ.Իվանենկոն շեշտում է, որ «խանություններում ճորտատիրական իրավունք գոյություն չի ունեցել»⁴: Հարցի վերաբերյալ հստակ պատասխանների չի կարելի

¹ Նույն տեղում, էջ 49-50:

² Նույն տեղում, էջ 61:

³ Шопен И., Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, СПб, 1852, с.926.

⁴ Иваненко В.Н., Гражданское управление Закавказьем от присоединения Грузии до наместничества Вел.Князя Михаила Николаевича, Тифлис, 1901, с.134.

հանդիպել վերջին տասնամյակներին պատմաբանների ու տնտեսագետների հրատարակած աշխատություններում, մի դեպքում մյուսադարները և թիուդարները ներկայացվում են որպես հողի սեփականատերեր, իսկ մի այլ դեպքում՝ որպես հասույթների մասնակիցներ: Մյուսի և թիուլի տնտեսական բնութագրությունները, որ կատարում է Դ.Անանունը, համընկնում են Ի.Շոպենի տեսակետին: Մյուսի իրավունքը տրվում է բարձր աստիճանավորներին ժառանգական կամ ցմահ իրավունքով, որը թույլ էր տալիս նրանց յուրացնել գյուղացիության արտադրած արդյունքների մի մասը: Դ.Անանունը միաժամանակ նշում է, որ մյուսադարը կարող էր խանի թույլտվությունն ստանալով վարել նաև առանձին տնտեսություն, որի դեպքում գյուղացիներին աշխատեցնելու և վարձատրելու հարցերը լուծվում էին ըստ փոխադարձ պայմանավորվածության: Թիուլն էլ էր տրվում բարձր աստիճանավորներին ցմահ կամ որևէ ժամկետով: Այս դեպքում թիուլ համարվող գյուղերից ստացվող եկամուտը ամբողջովին մնում էր թիուդարին: Ի տարբերություն մյուսի՝ այստեղ բացակայում է թիուլի օտարման իրավունքը:

Ամեն մի եկամտի ստացում ենթադրում է սեփականության ինչ-որ իրավունքի իրացում: Մյուսը և թիուլը փաստորեն հողի նկատմամբ «գերագույն սեփականատիրոջը» զիջված իրավունքն է: Դ.Անանունի հայեցողության մեջ կարելի է նշմարել մասնավոր սեփականության գոյության վերաբերյալ երկակի մոտեցում. մի կողմից, մերժում էր այն, իսկ մյուս կողմից՝ կարծես ընդունում նրա «անկայուն» գոյությունը՝ եկամուտների յուրացման իրավունքի առումով:

* * *

Դ.Անանունը խանական հարկերը, որանց «բաշխումն ու գանձումը» համարում էր «պետական գլխավոր գործառնությունը», ըստ էության կառավարման համակարգի հիմնական լծակները: Խանական կառավարությունը մի տնային մեծ տնտեսություն էր, որն իր ֆունկցիաները իրացնում էր «պաշտոնյաների սանդուղքին» համապատասխան: Բացի խաներից այդ սանդուղքը ներառում էր մի ամբողջ շարք այլ պաշտոններ՝ գանձապետ, մատակարար, մատանապետ, գրագիրներ, հարկահավաքներ, հսկիչներ և այլն: Չանդրադառնալով հարկերի ու տուրքերի առանձին մանրամասներին՝ Դ.Անանունը խանական եկամուտների կարևոր աղբյուր է դիտում առևտրաարդյունաբերական ձեռնարկությունները, որոնք հաճախ տրվում էին շահագործման կապալային սկզբունքով, ինչը «համապատասխանում էր խանական պարզ վարչական մեխանիզմին»¹:

* * *

Անդրկովկասի պատմության ու հասարակական փոխհարաբերությունների մեջ Ռուսաստանի տիրապետությունը վերափոխական լիցք էր, «նոր վարք ու բարք, որը հեղափոխականացնում էր հին լճացած իրականությունը և շարժման մեջ դնում բոլոր խավերին»: Երկրամասը ավելի շատ կառավարվում էր ավանդական օրենքներով, իսկ այժմ մարդու հասարակական գոյության կերպը դրվում է որոշակի օրենքների մեջ, իսկ «հաստատուն օրենքը» ոչ միշտ է դրական հետևանքներ ունենում: Գյուղացիությունից գանձվող մթերային տուրքերը փոխարինվում են դրամականով: Փոխվում էին հասարակական գոյության իրավիճակը, տնտեսական կացությունը, դասային կազմը: Հասարակական խավերը պետք է որոշեին իրենց տեղը «նոր պետական կարգերի մեջ»: Ռուսական իշխանությունների կողմից կատարվող վերափոխումները պարտադրում էին հասարակական զարգացման որոշակի կողմնորոշում. «Այդպիսով նրանք ընդառաջ էին գնում պետության ցանկություններին, որ ձգտում էր մեր ծայրագավառում ունենալ երկրի կենտրոնին համապատասխան հասարակական փոխհարաբերություններ, մի բան, որ բխում էր պետության հարգող քաղաքականությունից: Ռուսները հեղափոխական դեր կատարեցին ավելի շատ այստեղ, նրանք մի հարվածով խախտեցին բնաշրջման կանոնը և հասունացած ճանաչեցին այն, ինչ որ սաղմնային դրության մեջ էր և չէր կերպարանափոխվել դեռևս: Այդպես վարվեցին նրանք, օրինակ՝ հողի մասնավոր սեփականության խնդրում: Այսպես

¹ Անանուն Դ., նշվ. աշխ., էջ 66:

վերաբերվեցին դեպի զանազան ցեղապետներ՝ ճանաչելով նրանց ազնվականներ և ճորտատերեր: Այստեղ խոսում էր ինք՝ Ռուսաստանը, ազնվական, ճորտատիրական, լուսավորյալ ինքնակալության թելադրած օրենքներով կառավարվող Ռուսաստանը: Իր դասային պետական կյանքը նա պատվաստեց Անդրկովկասին: Հինարևելյան դեմոկրատիզմը, ուր բոլորը հավասար էին իրենց իրավազրկության և հեղհեղուկ կյանքի մեջ, սկսեց տեղի տալ հաստատուն դասային հիմնարկությունների, նահապետականության փոխարեն սկսվեց պատվաստվել «սպիտակ ոսկրի» պաշտամունքը, ջոկողությունը»¹:

Իսկ ինչպե՞ս են կատարվել այդ վերափոխությունները, ինչպե՞ս է այն արտացոլվել հողի նկատմամբ գոյություն ունեցող հարաբերությունների բնագավառում, որո՞նք էին կատարվող վերափոխումների տնտեսական և քաղաքական նպատակները: Դ. Անանունը այն կարծիքին է, որ Ռուսաստանին միանալուց հետո կառավարությունը չի զբաղվել գոյություն ունեցող տնտեսական հարաբերությունների ուսումնասիրությամբ, և որ դա իր բացասական դերն է կատարել ագրարային կացության խայտաբղետության հարցում: Ո՛չ գեներալ-նահանգապետ Երմոլովի՝ գյուղացիության հարաբերությունների կարգավորման միջոցառումները, ո՛չ Պասկևիչի, Գանի, Լադենսկու փորձերը նույն ուղղությամբ, ո՛չ 1846թ. հրովարտակն ու հաջորդ տարիներին հրատարակված օրենքները, ըստ էության, քիչ բան տվեցին և նպատակ էին հետամտում, քաղաքական նկատառումներից ելնելով, «սիրաշահելու իշխող տարրին», «և այնտեղ, ուր ոչ կայուն հողային մասնավոր սեփականություն կար, ոչ ճորտային դրություն,-նա ստեղծեց և մեկը, և մյուսը»²:

Չի կարելի չշեշտել սկզբունքային այն ճշմարտությունը, որ ընդգծում է Դ.Անանունը հարցի նման դրվածքում: Մեծ թե՛ նա ինչ էր գրում տարիներ առաջ հրատարակված հոդվածներից մեկում. «Այժմ հարց տանք մեզ, ինչ նորություն մտցրեց ռուսական տիրապետությունը հայ-թուրքական նահանգների հողային պայմանների մեջ: Նա հաստատ հիմքերի վրա գտավ հողային սեփականության ինստիտուտը և սեփականատեր հռչակեց նրանց, որոնք այդպիսին չէին եղել պարսկական իշխանության ժամանակ: Եվ ոչ միայն այդ: Նա նորելուկ կալվածատերերին դատիկանական-դատաստանական պաշտոնների կոչեց և նրանց խնամակալ կարգեց գյուղացիության գլխին, իսկ դա պակաս հարված չէր նրա կորացած մեջքին»³:

Հայ հեղինակը վկայակոչում է տեսակետներ, բանավիճում, բերում փաստական տվյալներ՝ գտնելով, որ այդ հարաբերությունները և կառավարման փոփոխություններ ենթադրող օրենքները ըստ էության գուրկ են ընդհանուր առաջադիմության զսպանակից: Այն ոչ միայն չստեղծեց «կուլտուրական արիստոկրատիա», այլ առաջ բերեց «պորտաբույժ հացկատակների մի խավ, որն ապրելով անաշխատ կյանքով ...ամենևին չէր մտահոգվում ոչ օրինակելի տնտեսության և ոչ էլ օրինակելի քաղաքացիական վարք ու բարքի մասին»⁴:

XIX դ. 70-ական թթ. հայ իրականության մեջ սկսվում է պատմական ժամանակաշրջանի հերթափոխություն: Երկրամասը մտնում է կապիտալիստական շրջափուլը: Արտադրողական ուժերի զարգացման ու նոր արտադրաձևերի թափանցման հետ տեղի է ունենում հասարակական կառուցվածքի փոփոխություն: Ոչ բոլոր ոլորտներում էին այդ փոփոխությունները կատարվում նույն խորությամբ ու նույն արագությամբ: Որքան էլ 1870թ. մայիսի 14-ի «Պոլո-ժենիան», որը գյուղացիական ռեֆորմ էր հռչակում Հայաստանի և Ադրբեջանի գյուղացիության համար, նույն հետևանքներն ունենար, ինչ 1861թ. ռեֆորմը Ռուսաստանի համար, այնուամենայնիվ, Դ.Անանունի կարծիքով, կոչված չէր հիմնավոր փոփոխության ենթարկելու ավատական հարաբերությունները: «1870թ. մայիսի 14-ի օրենքը, - գրում է Դ.Անանունը, - ճշտեց բարձր դասի (ազնվականների), վանքերի, եկեղեցիների և նրանց հողերի վրա նստած գյուղացիների

¹ Նույն տեղում, էջ 117:

² Նույն տեղում, էջ 146:

³ «Բարբի ճայն», 1913, N 28:

⁴ Նույն տեղում, N 30:

փոխհարաբերությունները: Գիտենք, որ այդ օրենքով ճորտական կարգերը չվերացան, այլ մեղմվեցին: 1865թ. օրենքով սահմանադրվեց շինական հասարակությունը: Օրենքը գյուղական համայնքից ստեղծեց նեղ դասային կազմակերպություն և այն սպասավոր կանգնեցրեց գանձարանային պահանջներին: Այդ օրենքները խնամակալության ենթարկեցին մեր գյուղացուն, կաշկանդելով նրա տնտեսական, հետևաբար, և հասարակական զարգացման թափը»¹:

Նորոգություն ակնկալող այդ օրենքը իր բովանդակությունը պիտի արտացոլեր գոյություն ունեցող բարդ ու հակասական հողային հարաբերությունները բնութագրող գործակիցներում: Կառավարության կողմից գյուղացիական ռեֆորմը դրվատող բնորոշումները հաճախ չէին համապատասխանում նրա իրագործման ընթացքի ուղղությանը, որը դրսևորվում էր հարկային, սեփականատիրական, դասային և այլ հարաբերություններում: Դա մասամբ պայմանավորված էր նաև հայաբնակ վայրերի խայտաբղետությամբ: Դ.Անանունը վկայակոչում է տվյալներ, ըստ որի XIX դարի 80-ական թթ. Անդրկովկասի Երևանի, Գանձակի, Կարսի, Թիֆլիսի, Բաքվի և Բաթումի նահանգներում հայ գյուղացիությունը կենտրոնացված էր թվով 1293 գյուղերում, որոնք ըստ նահանգների (հաջորդաբար) բաժանված էին հետևյալ ձևով՝ 464, 365, 80, 331, 46 և 7: Հասկանալի է, որ ագրարային հարաբերությունների բնագավառում սրանցից յուրաքանչյուրն ուներ իր առանձնահատկությունները: Գյուղացիության շուրջ 30%-ը իրենց բարքով ու ապրելակերպով «գունավորվել է մասնավոր կալվածատիրական կարգերին համապատասխան տվյալներով», Վրաստանում բնակվող գյուղացիությունը դրվեց «ժամանակավոր պարտադիր» վիճակում, որը ենթադրում էր հողաբաժինների փրկագնում, իսկ Հայաստանի ու Ադրբեջանի համար ստեղծվեց ժամանակավոր կախյալ վիճակ, որը ոչ այլ ինչ էր, քան ճորտության մեղմացրած ձևերի պահպանություն: Քանի դեռ կալվածատիրական դասը իր ձեռքում կենտրոնացրել էր հողային ֆոնդի զգալի մասը, դեռևս կենսունակ և ուժեղ էր այն պատվանդանը, «որի վրա խարսխվում է ավատատիրությունը», այն սովորություններն ու դասային կախվածությունը, որ ձևավորվել էր նախորդ տասնամյակներում:

* * *

Մ.Ադունցը, անդրադառնալով ռուսական կառավարության վարչական քաղաքականության հարցերին, նկատում է, թե այն «չէր համապատասխանում տեղական ազգությունների տեղաբաշխմանը: Ցարական կառավարությունը նահանգներն ու մարզերը այն հաշվով էր սահմանագծել, որպեսզի տեղական ազգությունները բնակեցվեն խառը շերտերով, նրանցից յուրաքանչյուրը կոտորակվի վարչական տարբեր շրջանների մեջ»²: Ինչ խոսք, Ռուսաստանը ունեցել է իր քաղաքական նկրտումները: Սակայն մյուս կողմից, նշում է Դ.Անանունը, ռուսական կառավարությունը «Ղարաբաղում աշխարհագրական գործոնին զոհ բերավ շատ բան: Մերձկասպյան երկիրը, շնորհիվ Կասպից ծովի ու Վոլգայի, ավելի սերտ էր կապված Ռուսաստանի հետ: Ղարաբաղն էլ վարչական հաստատություններով ու ճանապարհներով մոտեցվեց Մերձկասպյան երկրին: Նահանգական կենտրոն հռչակվեց Գանձակը (1868թ.), որ նախորդ դարի երկրորդ կեսում իր բնակչության թվով ու մյուս քաղաքային հարմարություններով շատ էր հետամնաց Շուշուց: ...Ղարաբաղի երկու մասերը լեռնաստանն ու տափաստանը մնացին կղզիացած վիճակում», մինչդեռ Ղարաբաղը Չանգեզուրի հետ ներկայացնում է «մի տնտեսական ամբողջություն»՝ կապված բազմաթիվ թելերով: Նա ընդգծում է Մ.Նալբանդյանի այն պատվիրանը, որ ազգության «ներքին ու արտաքին» խորհուրդը տնտեսական խնդիրն է, որի համար անհրաժեշտ է ստեղծել ընդհանուր տերիտորիալ պատվանդան, որպես «ազգային բարոյական կապն ամրացնող» գործոն, որից դուրս մնացած մյուս հատվածները իրենց

¹ Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը (1870-1900), հ.2, Էջմիածին, 1922, էջ 7:

² Ադունց Մ., նշվ. աշխ., էջ 19:

«նյութական գործընթացը անմասն են մնում ազգի կյանքին»¹: Նա զգուշացնում է, որ հակառակ դեպքում, եթե երկրամասի վարչական բաժանումը իրականացվի տվյալ ազգային տերիտորիայում «փոքրամասնություն ընդունելով» ու «փոքրամասնություն թողնելու» սկզբունքով, ապա սկիզբ է դրվելու ազգային այնպիսի քաղաքականության, որը ենթադրում է փոխադարձ հսկողություն, որպեսզի «յուրայինը որևէ խնդրում չբռնադատվի օտար հորիզոնի տակ և միաժամանակ ինքը բռնադատող չդառնա իր սահմանների մեջ»² և փոխադարձ անվստահություն՝ ստեղծելով «թունավոր մթնոլորտ ազգերի համար և նրան զարգացումն ու միտքը հանապազ բևեռած պահե ազգային հարցի սուր անկյունների վրա: Ղարաբաղին վիճակված էր հենց այդ ճակատագիրը: Վերլուծելով Հայաստանի ու Ղարաբաղի տնտեսական ամբողջության հիմքերը՝ Դ.Անանունը եզրակացնում է, թե «Ղարաբաղը ամբողջական Հայաստանից դուրս՝ դա խոց է ... Եթե Ադրբեյջանում խելքը գլխին քաղաքագետներ լինեին, նրանք ամենից առաջ պիտի հրաժարվեին Ղարաբաղից: Եթե Հայաստանում հայրենիքի հավաքման համոզված գործիչներ կան՝ նրանք օրն ի բուն պիտի խորհեն Ղարաբաղի մասին: Պայքարին է վերապահված լուծելու հարցը և հանելու Ղարաբաղի հայությունը ... բարելոնյան գերությունից»³:

Դավիթ Անանունի «տնտեսական ամբողջությունը» ենթադրում է կառավարման միասնական համակարգ, որը պիտի հաստատուն կենսապայմաններ ապահովեր ազգային ընդհանուր հանրության ու հաստատությունների կենսագործունեության ու հարատևության համար:

ՄԱՐԻՆԵ ԱՂԱՅԱՆ

ՀՊՃՀ տ.գ.բ., դոցենտ

ՀԱՅ ԿՈՌՊԵՐԱՏԻՎ ՄՏԵԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

XIX դարի 70-ական թվականներին հայ իրականության համար սկսվում է մի նոր պատմաշրջան: Կապված երկրամասի կապիտալիստական փոխակերպության հետ՝ հայ տեսական միտքը կանգնում է քննության առջև: Առաջադրվում են հասարակական ներհակությունները հարթելու և դրա սոցիալական առաջընթացն ակնկալող ամենատարբեր նախագծումներ, որոնցից մեկը ինքնօգնության սկզբունքներով արտադրական ու սպառողական կոոպերացիաների ստեղծումն է:

XIX դարի վերջին քառորդում կապիտալիստական հարաբերությունների զարգացումը հանգեցնում է մանրգյուղացիական տնտեսության քայքայմանն ու գյուղի սոցիալական շերտավորմանը: Վերջինիս հաղթահարման համար չափազանց գայթակղիչ է դառնում կոոպերացիան, որի «հրաշագործ» և «փրկարար» հնարավորությունների մասին բազմիցս սկսել էին գրել հայ մտածողները³: Սոցիալական հարցի քննությունը սուր կետի վրա էր դրվել. այն, որքան պատմական, նույնքան էլ համամարդկային էր: Պատահական չէ, որ ժամանակի վերլուծաբանները տնտեսական զարգացման կարևոր պայմաններից մեկը համարում էին ընկերական ոգու դաստիարակությունը. «Ամեն մի լուսավորված ու քաղաքակրթված երկրի ու ազգի մեջ, երբ անհատական ուժը բավականանում չի մի գործ առաջ տանելու ու գլուխ ածելու համար,

¹ Դ.Անանունը սույն դիտողությունները կատարել է «Ղարաբաղ» հոդվածում, որը լույս է տեսել «Հայաստանի կոոպերացիա» ամսագրի՝ 1920թ. օգոստոսի համարում: Արտատպվել է «Գրական թերթի» 1989թ. N 2-ում, որտեղից էլ կատարվել են հղումները:

² Նույն տեղում:

³ Տե՛ս «Մեղու Հայաստանի», 1866, N 1, 1882, N 21, «Նոր-Ղար», 1890, N 135, 1895, N 103, 152, 155, 1897, N 9, 1898, N 212, «Գյուղատնտես», 1909, N 2, 14, 1916, N 8: